| ինտերնետային կապի անցում                                                                                 |                                                                                             |
| Ն.3 Ուսուցչական և աշակերտական համակազմերի մեղիագրագիտության ավելացում                                    | 3.1 Ընդլայնել SՀS միջոցների կիրառման հնարավորությունները, չափերը և հաճախականությունը        |
| Ն.4 Արմաթ ինժեներական խմբակի հանդեպ հետաքրքրության մեծացում                                              | 4.1 Աշակերտների և ծնողների շրջանում ակտիվացնել Արմաթ ինժեներական խումբ հաճախելու մոտիվացիան |
| Ռ.7, Ն.1. Ուսումնական 2-րդ և 3-րդ փուլերի ավարտին ունենալ մասնագիտորեն կողմնորոշված շրջանավարտներ        | 1.1 Տեղեկանալ համայնքում և մարզում առկա մասնագիտությունների մասին                           |
|                                                                                                          | 1.2 Դասակարգել համայնքի զարգացման ուղղությունները                                           |
|                                                                                                          | 1.3 Համապատասխան մասնագիտությունների հանդեպ վերաբերմունքի ձևավորում                         |
| Ն.2. Բարձրացնել օտար լեզուների ուսուցման մակարդակը դպրոցում                                              | 2.1 Օտար լեզուների դրվածքի ուսումնասիրում                                                   |
|                                                                                                          | 2.2 Հետադարձ կապի ապահովում                                                                 |
| Ն.3 Դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման մակարդակի ավելացում, համագործակցայի և միջավայրի ապահովում | 3.1 Մեթոդավորումներում առարկաների դրվածքի ուսումնասիրման իրականացում                        |
| Ռ.8, Ն.1. Դասավանդման մեթոդների բազմազանության ապահովում                                                 | 1.1 Առկա իրավիճակի ուսումնասիրում և քննարկում մեթոդի ավորումներում                          |
|                                                                                                          | 1.2 Փորձի փոխանակություն                                                                    |
|                                                                                                          | 1.3 Հետադարձ կապ                                                                            |
| Ն.2. Մանկավարժական խորհրդի նիստերի դերի մեծացում                                                         | 2.1 Մանկավարժական խորհուրդների իրավունների և պարտականությունների լուսաբանում                |
|                                                                                                          | 2.2 Կարծիքների փոխանակության և երկխոսության ապահովում                                       |
|                                                                                                          | 2.3 Որոշումների բազմակողմանի քննարկում և որոշման կայացում                                   |
| Ն.3. Ապահովել դպրոցում և նրանից դուրս անվտանգ օնլայն միջավայր                                            | 3.1 Ուսումնասիրել ուսուցիչների և աշակերտների օնլայն հարթակներին միանալու նախասիրությունները |
|                                                                                                          | 3.2 Գնահատել դրանց անվտանգության սահմանները                                                 |
| Ն.4 Միջհամայնքային կապերի ամրապնդում                                                                     | 4.1 Ընդհանուր թեմաների և հիմնախնդիրների սահմանում, միջոցառումների ցանկի կազմում             |

|                                                                                                                                                                    |                                                            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------|
| հարևան դպրոցների հետ                                                                                                                                               |                                                            |
| Ռ,9,Ն.1 Կրթության որևի բարձրացում աշխատակազմի արժևորման և խրախուսման միջոցով                                                                                       | 1.1 Մշակել դպրոցի աշխատակազմի արժևորման նոր մեխանիզմներ    |
| Ն.2 Ըստ կրթական կարիքների ներդ-պրոցական աջակցության ցուցաբերում ինքնակրթությանը                                                                                    | 2.1 Համապատասխան մեխանիզմների մշակում,միջոցների հայթայթում |
| Ն.3 Ֆինանսական կարգավորումներ                                                                                                                                      | 3.1 Ֆինանսական աղբյուրների հստակեցում                      |
| Ն.4 Խրախուսման նոր մեխանիզմների ներդրում,խրախուսման ոլորտների և չափերի հստակեցում                                                                                  | 4.1 Ալտերնատիվ տարբերակների դիտարկում և կիրառում           |
| Ռ.10,Ն1.Ունենալ դասակարգված հստակ ֆինանսական պլան,որը կընդգրկի բազմակողմանի զարգացման ուղղությունների ընգրկում,կլինի համագործակցային և կներգրավի շահագրգիռ կողմերի | 1.1 Գտնել բարերարներ,հովանավորներ                          |
|                                                                                                                                                                    | 1.2 Համագործակցել խոշորացված համայնքապետարանի հետ          |
|                                                                                                                                                                    | 1.3 Համագործակցություն տարբեր դրամաշնորհային ծրագրերի հետ  |
|                                                                                                                                                                    |                                                            |
| Ն.2 Ձեռնարկատիրական գործունեության իրականացում                                                                                                                     | 2.1 Ոլորտի հստակեցում,Գործունեության ծավալում              |

### ***3.Ուսումնական հաստատության գործունեությունը***

Աղավաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցը իրականացնում է հանրակրթական ծրագրեր պարտադիր հանրակրթության երեք աստիճաններում/1-12-րդ դասարան/։«Աղավաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ը հիմնադրվել է 1976թ.։Դպրոցի տիպը ըստ իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրի՝ ընդհանուր է։Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի՝ միջնակարգ է։Աշխատանքային շաբաթը՝ 5-օրյա է ,դպրոցը միահերթ է։Աշխատանքային ռեժիմը՝ Աշխատանքային օրենսգրքին և օրինակելի կանոնադրությանը համապատասխան։Ուսումնական հաստատությունը լիցենզավորված է,կան

համապատասխան վկայականները:

- ✓ Հաստատության անվանումը՝

*Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան*

*միջնակարգ դպրոց*

- ✓ ԿԳՄՄ նախարարի 23.07.2010թ N 0223Ա հրամանով տրվել է կրթական լիցենզիա

նախատեսված մինչև 300 աշակերտի համար

- ✓ Պետոեզիստրի վկայականի գրանցման համարը՝ *N 85.210.01592*
- ✓ Վկայականի համարը՝ *N0283/տարրական/, N0278/հիմնական/, N0224/միջնակարգ/ N03Ա057205*

- ✓ Հասցեն՝ *Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գ. Աղավնաձոր .2-րդ փող., 2 շենք./2311/*
- ✓ Հաստատության կանոնադրությունը հաստատվել է մարզպետի կողմից՝ 02.12.2010թ N408 որոշմամբ, փոփոխվել է՝ 26.04.2023թ.
- ✓ Դպրոցը ունի իրավաբանական անձի կարգավիճակ, կլոր կնիք, ինքնուրույն հաշվեկշիռ, գանձապետական հաշիվ
- ✓ Էլեկտրոնային հասցեն՝ *kotayk\_aghavnadzor@mail.ru*

Հաստատության ինտերնետային կայքի հասցեն՝ <https://aghavnadzor-kotayq.schoolsite.am/>

### **3.1 Կրթական կարիքների նկարագրություն**

Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցը իրականացնում է գործունեություն՝ կրթական երեք աստիճաններում: Կրթության երեք աստիճանում իրականացվում է ՀՀ հանրակրթական պետական չափորոշին, պետական ծրագրերին համապատասխան գործունեություն, ուսումնադաստիարակչական, թեմատիկ պլանները կազմվում և իրականացվում են բացառապես ՀՊԶ-ին և ԿԳՄՄ նախարարության կողմից երաշխավորված պետական ծրագրերին համապատասխան:

Ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարման համար շատ կարևոր է ժողովրդավարական սկզբունքների կիրառումը, փոխազդեցությունների, հաշվետվողականության, վերահսկողության համակարգերի առկայությունը կոլեգիալ կառավարման կոնտեքստում: Դպրոցը ունի տնօրենի Ժ/պ, վարչատնտեսական համակարգող, որոնք հաշվետու են մի կողմից հիմնադրին՝ ՀՀ , ի դեմս լիազոր մարմին-

ների, մյուս կողմից դպրոցի կառավարման խորհրդին, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներին: Պահպանվում է ուսուցիչների, դասուցիչների, մ/մ-ների, ուսմասվարի և մյուս մարմինների հաշվետվողականությունը: Վերջին հինգ տարիների ընթացքում ուսուցչական համակազմի անդամները պարբերաբար ըստ ժամանակացույցի հինգը տարին մեկ պարտադիր ատեստավորվել են: Բացի պարտադիր ատեստավորումից ուսումնական գծով փոխտնօրենը, ուսուցիչները վերապատրաստվել են և մասնակցել ` ներառական կրթության վերաբերյալ առկա և հեռավար դասընթացների , որը կազմակերպվել է ԿԳՄՍ նախարարության և ԿԶՆԱԿ-ի կողմից: Դպրոցի շենքը մասնակի հարմարեցված է ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքներին /կա թեքահարթակ/ : Մաթեմատիկայի ուսուցիչ Մանուկյան Անին մասնակցել է ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված ՏՀՏ վերապատրաստումներին, ունի հավաստագիր, մասնակցել է ԵՄՊՀ-ի կողմից կազմակերպված <<Դասագրքաստեղծ ուսուցիչ>> դասընթացներին /վերապատրաստումներին/, ունի դասագրքեր գնահատող, փորձարկող ուսուցչի որակավորում , ինքնակրթության շրջանակներում մասնակցել է ՔԱՆ Ակադեմիայի կողմից կազմակերպված <<Քովիդ -19>> հեռավար ուսուցման դասընթացներին, ունի համապատասխան լիցենզիա: Աշխարհագրության ուսուցիչ Նարինե Վարդանյանը մասնակցել է ՀՊՄՀ <<Լանդշաֆտային պլանավորում>> գիտական սեմինարներին, ունի Smart Notebook դասընթացի մասնակցության սերտիֆիկատ, ունի մագիստրոսի աստիճան: Հանրակրթության առաջին աստիճանում/տարրական դպրոցում/ անչափ կարևորվում է համգործակցային միջավայրը, ներառականությունը, դպրոց-ընտանիք ամուր կապը, քանի-որ կրթության առաջին փուլում խիստ անհրաժեշտ է դպրոցի և ծնողների համագործակցությունը: Տարրական դասարանների և միջին դպրոցի միջև մշտական շահարկման առարկա է գնահատականների կտրուկ անկումը տարրական դպրոցից միջին դպրոց տեղափոխվելու ընթացքում, որը հուսով եմ նոր ՀՊԶ-ի կիրառման արդյունքում կհարթվի: Երկրորդ և երրորդ դասարաններում դժվարություններ են առաջանում օտար լեզուների ներմուծման ժամանակ: Հիմնական կրթության իրականացման գլխավոր նպատակն է ` լեզվական գրագիտության և կարողունակության, սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական , թվային և մեդիա , մշակութային, մաթեմատիկական և գիտատեխնիկական , տնտեսական կարողունակությունների չափորոշչային նվազագույն պահանջների ապահովման և կայուն զարգացում ապահովելու ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Անչափ կարևորվում է մարդ- անհատ և ակտիվ քաղաքացի ձևավորելու հանգամանքը: Այս ամենին զուգահեռ ի հայտ են գալիս նաև խանգարող հանգամանքներ: Միջին դպրոցը ունի իր առանձնահատկությունները, այս տարիքային խմբում կրթության մակարդակը միտված է անկում ապրելու, կարևորվում են անձնային ` մարդ-անհատ և հասարակության անդամ /ընկերական միջավայր/ որակները: Պակասում է ուսման

հանդեպ հետաքրքրությունները: Հարահոս լրատվական և ինֆորմացիոն –տեղեկատվական նյութերի հորձանուտում դժվարանում է ճիշտ աղբյուրներ գտնել,որը վտանգավոր է: Կարևոր է նախնական մասնագիտական կողմնորոշումը, փոխհամագործակցությունը , ինքնակրթությունը և ինքնագնահատումը:

Աղավնաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցը ունի երկար տարիների գեղեցիկ ավանդույթներ:2003 թվականին դպրոցն անվանակոչվել է Հայաստանի Հանրապետության ազգային հերոս,Գետաշենի ինքնապաշտպանության ժամանակ զոհված համագյուղացի և նույն դպրոցի շրջանավարտ Զարգանդ Դանիելյանի անունով:Անկախության 32 տարիների ընթացքում ունեցել ենք ևս չորս զոհ:Դպրոցում կա փառքի անկյուն:Յուրաքանչյուր տարի տարբեր առիթներով՝ պետական տոների, հիշատակի օրերի , դպրոցում տեղի են ունեցել տարբեր գեղեցիկ և բարձր մակարդակի միջոցառումներ,որին մասնակից է եղել ամբողջ համայնքը: Դպրոցում կազմակերպվել են տարբեր ազգային, մշակութային միջոցառումներ: Դպրոցը դարձել է համայնքի կրթամշակութային կենտրոնը,հատկապես,որ գյուղում մշակույթի կենտրոնը չի գործում:Ավագ դասարաններում կա հստակ մասնագիտական կողմնորոշվածություն, այս տարիքային խմբի աշակերտները իրենց համարում են համայնքի անդամ,հստակ պատկերացում ունեն համամարդկային և համայնքային հիմնախնդիրների մասին: Նրանք կիսում են իրենց ընտանիքների հոգսը: Վերջին 10 տարիների ընթացքում աշակերտները հաճախ ընտրում են մասնագիտություններ,որոնց համար անհրաժեշտ է անգլերենի իմացությունը, իսկ դպրոցում ուսուցանվող երկրորդ օտար լեզուն ֆրանսերենն է: Ակնհայտ է կրկնուսույցներին դիմելու գործոնը: Ուսումնադաստիարակչական ծրագրերում շեշտը դրվում է հայրենասիրական, ազգային արժեհամակարգի ձևավորման վրա, համայնքային և համամարդկային հիմնախնդիրների վրա:Միջնակարգ կրթության ավարտին մենք ունենում ենք առողջ մտածելակերպով, կարողունակ, հասարակությանը և հայրենիքին պիտանի քաղաքացիներ :

Դպրոցն ունի միասնական կառավարման խորհուրդ,մանկավարժական խորհուրդ,չորս մեթոդմիավորումներ/հումանիտար,բնամաթեմատիկական,ռազմահայրենասիրական, տարրական,աշակերտական խորհուրդ,ծնողական խորհուրդ, արհեստակցական միություն:

Դպրոցի վարչատնտեսական համակարգողը տնօրենի հետ համագործակցում և ուսումնասիրում են ուսումնադաստիարակչական նպատակներով դպրոցին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների առկայությունը կամ կարիքները,ուսումնական պրոցեսի շարունակականության ապահովման համար անհրաժեշտ միջոցները: Ուսումնական հաստատության տնօրենի զարգացման ծրագրին համապատասխան կազմվում են առաջիկա տարվա բյուջեի նախագծերը,ուսումնադաստիարակչական պլանները,ներկայացվում կառավարման մարմինների և լիազոր մարմնի հաստատման:

|                                                                                  |                  |
|----------------------------------------------------------------------------------|------------------|
| <b>Կրթական կարիքների համապատասխանեցումը ուսումնական գործընթացի կազմակերպմանը</b> | <b>Գնահատում</b> |
| Ուսումնական կրթական գործընթացի                                                   | լավ              |



|                                                                                                                                                             |         |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------|
| կազմակերպումը, համագործակցային, ներառական, բազմակարծիք միջավայրի ստեղծում                                                                                   |         |
| Ուսումնական գործընթացի համար դասասենյակների, լաբորատորիաների, մարզադահլիճի, հանդիսությունների դահլիճի, բուժկետի, ապաստարանի, ճաշարանի առկայություն          | բավարար |
| Մասնագետներով ապահովվածությունը, կրթական մակարդակը, դասագրքերով, գեղարվեստական գրականությամբ, SՏS սարքավորումների, ուսումնական նյութերի ապահովման մակարդակը | բավարար |
| Ուսումնական ծրագրերի, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման մակարդակը                                                                                          | բավարար |
| Թվային և մեդիագրգրագիտության մակարդակը, տեղեկատվության դաշտի բավարարած լինելը                                                                               | Լավ     |

### ***3.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան:***

<< Հանրակրթության պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է: Դպրոցում կրթության և համակողմանիորեն զարգացած, հայրենասեր, ազգասեր, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, մասնագիտական կողմնորոշում ունեցող, ստացած գիտելիքները կյանքի տարբեր բնագավառներում տեղայնացնող անհատի և քաղաքացու ձևավորումն է:>>

*/ Հանրակրթության մասին օրենքը/*

«Աղավաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ը իր գործունեությունը ծավալում է Աղավաձոր համայնքում, և ըստ էության գյուղի միակ հանրակրթություն իրականացնող օղակն է: Դպրոցը ապահովում է ներդպրոցական, դպրոց-համայնք, դպրոց- մանկապարտեզ և տարածաշրջանի միջդպրոցական համագործակցային միջավայր: Դպրոցի գործունեությունը համահունչ է պետության կողմից մշակվող քաղաքականությանը, իրականացվող նոր բարեփոխումների գործընթացներին: Միաժամանակ հաշվի է առնվում համայնքի անդամների և շահառու անձանց կարիքները և հնարավորությունները: Շատ մեծ կարևորություն է տրվում ներառական միջավայրի ապահովմանը: Դպրոցում կա ներառվող մեկ երեխա, ուսումնադաստիարակչական աշխատանքները միտված են երեխայի համար կրթության առանձնահատուկ պայմաններ ապահովելուն, կա սերտ համագործակցություն ՏՄԱԿ-ի

հետ, սակայն քիչ են դիտակտիվ, շոշափվող, օգնող միջոցները: Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման շրջանը երբեմն խաթարում է առանձին –առանձին աշակերտների ուսումնառության շարունակականությունը, հաշվի առնելով համայնքի կարիքները՝ դպրոցը և ուսուցչական համակազմը հանդուրժող վերաբերմունք է դրսևորում և օգնում են դասապրոցեսից հետ մնացած աշակերտներին բաց թողնվածը լրացնելու գործում: Ամուր կապեր են հաստատվել գյուղի մանկապարտեզի և դպրոցի միջև, ամեն ինչ արվում է մանկապարտեզ-դպրոց ընթացքը սահուն և անցավ կազմակերպելու համար: Հաճախակի կազմակերպվում են փոխադարձ այցեր: Աղավաճորի միջնակարգ դպրոցում ես աշխատում եմ շուրջ 24 տարի, և վաղուց համայնքի կրթական կարիքների շարքում առաջնային տեղ է զբաղեցնում երրորդ օտար լեզվի՝ անգլերենի ներմուծումը, քանի-որ յուրաքանչյուր տարի միջինը 3-5 աշակերտ ստիպված են կրկնուսույցների մոտ պարապել և լրացնել բացը: Գյուղում չի գործում Կուլտուրայի տունը/այժմ գտնվում է վերանորոգման փուլում/, գործում է միայն մեկ սպորտայի խմբակ և պարի խումբը: Մնացած խմբակներին մասնակցելու համար աշակերտները ստիպված են գնալ Հրազդան քաղաք, որը ֆինանսական և այլ անհարմարություններ է ստեղծում ծնողների և աշակերտների համար: Դպրոցում պահպանվում է անվտանգ կենսագործունեության, ուսումնառության համար անհրաժեշտ անվտանգ ֆիզիկական և բարոյահոգեբանական միջավայր: Հասանելի են ժամանակակից տեխնոլոգիաների գործունեության համար անհրաժեշտ պայմանները, ուսումնառության ընթացքում դրանց կիրառումը ապահովված է: Դպրոցը համագործակցում է բազմաթիվ կրթական ծրագրերի հետ, օգտվում են տարբեր կրթական հարթակներից և կայքերից: Եղած միջոցները սուղ են և զգացվում է ժամանակակից տեխնոլոգիաների պակաս: Ինչպես հանրապետության որոշ կրթօջախներում, այնպես էլ Աղավաճորի միջնակարգ դպրոցում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի <<Կայուն դպրոցական սնունդ>> միջոցառման շրջանակներում կահավորվել է ճաշարանը և համագործակցելով ծնողների հետ՝ 1-4-րդ դասարանների աշակերտներին հատկացվում է անվճար և անվտանգ սնունդ: Արցախում տեղի ունեցած վերջին իրադարձությունների հետևանքով Արցախից տեղահանված երեխաներ են հաճախում դպրոց, ուսուցչական և աշակերտական համակազմը նրանց ընդունել է գրկաբաց, ամեն ինչ արվում է այդ աշակերտների շուտափույթ ներգրավումը ուսումնական պրոցես ապահովելու համար: Կազմակերպվում է դասագրքերի ձեռք բերման և տարաբնույթ օգնության տրամադրման գործընթացներ: Դպրոցը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ և Կառավարության որոշումներով ուսումնական հաստատությանը ներկայացված չափանիշներին, ապահովված է համապատասխան ենթակառուցվածքներով, մանկավարժական, մասնագիտական ռեսուրսներով և հնարավորություններով:

### ***3.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների /դահլիճներ,լաբորատորիաներ,արհեստանոցներ,առարկայական կաբինետներ,ճաշարան/:***

Աղավաճորի միջնակարգ դպրոցը ապահովված է ուսումնական հաստատության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Դպրոցը ունի սպորտդահլիճ, երկու լաբորատորիա, արհեստանոց, առարկայական երկու կաբինետ, ճաշարան: Դրոցի աշակերտների քանակը չի գերազանցում կանոնադրությամբ սահմանված նորմերին: Ավելին, բավականաչափ հնարավորություններ, չօգտագործված ռեսուրսներ կան: Սպորտդահլիճը նորոգված է, բայց ունի գույքով հագեցած լինելու խնդիր: Դպրոցը ունի մեկ հանդիսությունների դահլիճ, որը կահավորման կարիք ունի, բեմի հարդարանքը հին է, նստարաններ չկան: Դպրոցում կա երկու լաբորատորիա, որոնք հագեցած չեն ուսումնական ժամանակակից նյութերով, եղածն էլ հին է: Կա մեկ արհեստանոց, որը իր նպատակին չի ծառայում: Խորհրդային շրջանից կան խառատային հաստոցներ, որոնցից ոչ բոլորն են աշխատում: Առարկայական կաբինետները երկուսն են, որոնք ուսումնական նյութերով մասամբ են հագեցած: Ըաշարանը ծառայում է տարրական դասարաններին անվճար սնունդ տալու համար: Բարձր դասարանի աշակերտները և ուսուցիչները սնվելու հնարավորություն չունեն:

Առանձնասենյակ / ուսուցչանոց -3- 155 մ.քառ.

Դասասենյակ -12- 610,65 մ.քառ.

Լաբորատորիա -2 -30,38 մ.քառ.

Մարզադահլիճ -1 -174,25 մ.քառ.

Հանդիսությունների դահլիճ- 1- 92,1 մ.քառ.

Արհեստանոց- 1- 119,96մ.քառ.

Ռազմագիտության կաբինետ -1 -61,07մ.քառ.

Ճաշարան -1- 83,91 մ.քառ.

Բուժկետ -1 -7,7 մ.քառ.

Բացօդյա սպորտհրապարակ- 1- 300 մ.քառ.

Զուգարան- 5 -49,48 մ.քառ.

Գրադարան -1 -15,93 մ.քառ.

Արմաթ ինժեներական լաբորատորիա -1 -51,6 մ.քառ.

Աղավնաձորի միջն. դպրոցի

Քիմիայի լաբորատորիայի ուսումնական գույքի ցա նկ

|    | Քիմիայի լաբորատորիայի ուսումնական գույքի ցա նկ | հատ |
|----|------------------------------------------------|-----|
| 1  | Միկրոպրեպարատ                                  | 5   |
| 2  | Լաբորատոր պատվանդան                            | 5   |
| 3  | Բաժանիչ ձագար                                  | 4   |
| 4  | Ատոմի մոդել                                    | 3   |
| 5  | Լուծվող նյութերի ստացման սարք                  | 3   |
| 6  | Քիմիական ռեակցիաների սարք                      | 2   |
| 7  | Ռինիվերսալ տակդիր                              | 4   |
| 8  | Էլեկտրական սարք                                | 2   |
| 9  | Էլեկտրական սալիկ լաբորատորիական                | 2   |
| 10 | Փոխարկիչ փորձանյութ                            | 3   |
| 11 | Բջջի բաժանում                                  | 2   |
| 12 | Մենդելևի օրենքը                                | 1   |
| 13 | Մետաղների համաձուլվածքների կոլեկցիա            | 14  |
| 14 | Օգտակար հանածոներ                              | 4   |
| 15 | Հավաքածու քիմիական փորձերի                     | 4   |
| 16 | Սպասքի հավաքածու                               | 5   |
| 17 | Դպրոցական հավաքածու                            | 3   |
| 18 | Սարք քիմիական փորձերի                          | 3   |
| 19 | Մանրադիտակ                                     | 7   |
| 20 | Քիմիական նյութերի հավաքածու                    | 30  |
| 21 | Գլոբուս ֆիզիկական                              | 8   |

Կենսաբանության ուսումնական գույք

|                                         |          |
|-----------------------------------------|----------|
| 1. Մարդու կոկորդ                        | - 2հատ   |
| 2. Բույսերի հերբարիում                  | - 10 հատ |
| 3. Բանջարեղենի հավաքածու                | - 18 հատ |
| 4. Մերկասերմ բույսերի(եղևնու) հավաքածու | - 16 հատ |
| 5. Միաբջիջ ջրիմուռների զարգ. ցիկլ       | - 3 հատ  |
| 6. Երիկամի մակետ                        | - 4 հատ  |
| 7. Բալի ծաղկի մոդել(թերի)               | - 4 հատ  |
| 8. Սնկերի մուլյաժ                       | - 7 հատ  |
| 9. Ցորենի ծաղիկ                         | - 6 հատ  |
| 10. Ձիու վերջույթ                       | - 4 հատ  |
| 11. Մարդու կմախքի մոդել                 | - 1 հատ  |
| 12. Կատվի կմախք                         | - 1 հատ  |
| 13. Թռչնի ձվի մոդել                     | - 2 հատ  |
| 14. Բնափայտային ցողունի հավաք           | - 1 հատ  |
| 15. Բամբակի հավաքածու                   | - 1 հատ  |
| 16. Բույսերի և կենդ. դասակարգ. սխեմա    | - 2 հատ  |
| 17. Մենդելի օրենքի ներկայացում          | - 3 հատ  |
| 18. Էնդոկրին համակարգ(մակետ)            | - 2 հատ  |
| 19. Ռուդիմետ օրգաններ                   | - 2 հատ  |
| 20. Կեղևի, բնափայտի հավաք. (փոքրերը)    | - 6 հատ  |
| 21. Մարդու ականջի մոդել                 | - 2 հատ  |
| 22. Առնետի ներքին կառուցվածքը           | - 1 հատ  |
| 23. Արմատի բջջային կառ. (մակետ)         | - 1 հատ  |
| 24. Մամուռի զարգացման ցիկլ              | - 1 հատ  |
| 25. Կատոֆիլի ծաղկի մոդել                | - 3 հատ  |
| 26. Ոչխարի վերջույթ                     | - 2 հատ  |
| 27. Սնկերի բազմացումը(մոդել)            | - 3 հատ  |
| 28. Պտերի զարգացման ցիկլ                | - 3 հատ  |
| 29. Մարդու բիոսֆերա                     | - 1 հատ  |
| 30. Մարդու գանգ                         | - 1 հատ  |
| 31. Կոնվերգենցիա                        | - 2 հատ  |
| 32. Թաց պրեպարատներ(խառը)               | - 30 հատ |
| 33. Աչքի մոդել                          | - 2 հատ  |
| 34. Առնետի կմախք                        | - 1 հատ  |
| 35. Կոկորդի մոդել                       | - 2 հատ  |
| 36. Թռչի մոդել                          | - 1 հատ  |
| 37. Երիկամի մոդել                       | - 1 հատ  |
| 38. Սրտի մոդել                          | - 1 հատ  |
| 39. Սպիտակուցի սինթեզի ապլիկացիա        | - 1 հատ  |

|                                       |          |
|---------------------------------------|----------|
| 40. Բջջի բաժանումը(մակետ-ապլիկացիա)   | - 1 հատ  |
| 41. Խլուրդի կմախք                     | - 1 հատ  |
| 42. Գորտի կմախքի մասեր(բաժանիչ նյութ) | - 1 հատ  |
| 43. Բուսաբանության պլակատներ          | - 12 հատ |
| 44. Կենդանաբանության պլակատներ        | - 15 հատ |
| 45. Մարդու սիրտ                       | - 1 հատ  |
| 46. Մանրադիտակ                        | - 20 հատ |
|                                       |          |

### Աղավնաձորի միջն.դպրոցի

Ֆիզիկայի լաբորատորիայի ուսումնական գույքի

#### ցանկ

1. Գրաֆոպրոեկտոր < Лектор > - 1 հատ
2. Գրաֆոպրոեկտոր < Лети 60> -1 հատ
3. Կինոապարատ - 2հատ
4. Էլեկտրական սարքերի կոմպլեկտ - 2 հատ
5. Լազերային խողովակ - 1 հատ
6. Քարշիչ պահարան - 1հատ
7. Օսցիլոգրաֆ - 2 հատ
8. Էլեկտրական սարքերի կոմպլեկտ - 1 հատ
9. Կողոսկոպ < Լեխ – 50 > - 9 հատ
10. Կինոապարատ < ՈՒկրաինա > - 2 հատ
11. Դիապրոեկտոր «Սվիտյազ» - 2 հատ
12. Ամպերմետր - 22 հատ
13. Ֆիլմոսկոպ - 1 հատ
14. Գծագրական սարք - 2 հատ
15. Գազի օրենք ցուցադրող սարք - 2 հատ
16. Մանովակումետր - 1 հատ
17. Պրոեկցիոն ապարատ - 1 հատ

|                                             |          |
|---------------------------------------------|----------|
| 18.Դինամոմետր ցուցադրական                   | - 1 հատ  |
| 19.Գեներատոր ցածր հաճախության               | - 1 հատ  |
| 20.Ռադիոտեխնիկայի հավաքածու                 | - 2 հատ  |
| 21.Էլեկտրական լամպերի հավաքածու             | - 2հատ   |
| 22.Օդային պոմպ ձեռքի                        | - 4 հատ  |
| 23.Երեք գնդիկների հավաքածու                 | - 1 հատ  |
| 24.Լծակարո կշեռք                            | -1հատ    |
| 25.Արքիմեդի դույլ                           | - 1 հատ  |
| 26.Էկրան անցքով                             | - 1 հատ  |
| 27.Պասկալի գունդ                            | - 1 հատ  |
| 25.Լույսի ինտերֆրակցիայի և դիֆրակցիայի հավ. | - 2 հատ  |
| 26.Լուսաչափական սարք                        | - 1 հատ  |
| 27.Օպտիկայի օրենք ցուցադրող սարք            | - 1 հատ  |
| 28.Սպեկտրոսկոպ                              | - 4 հատ  |
| 29.Ռեոստատ РКС-2                            | - 10 հատ |
| 30.Ջերմաչափ ցուցադրական                     | - 1 հատ  |
| 31Կշեռք ВНШО-2                              | - 2 հատ  |
| 32Միլիամպերմետր                             | - 15 հատ |
| 33.Աստղադիտակ                               | - 2 հատ  |
| 34.Կիսահաղորդիչների հավաքածու               | - 5 հատ  |
| 35.Էլեկտրամագնիսային ալիք ցուցադրող սարք    | - 3 հատ  |
| 36.Նյութոնի խողովակ                         | - 3 հատ  |
| 37.Անկշռելիության օրենք ցուցադրող սարք      | - 6 հատ  |

Աղավնաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցի  
մարզագույքի ցուցակ

|                                 |   |       |
|---------------------------------|---|-------|
| 1. Զուգափայտ                    | - | 1հատ  |
| 2. Մարմնամարզական պատ           | - | 4հատ  |
| 3. Մարմնամարզական նստարան (մեծ) | - | 7հատ  |
| 4. Մարմնամարզական նժույգ        | - | 2հատ  |
| 5. Մարմնամարզական ներքնակ       | - | 15հատ |
| 6. Մարմնամարզական կամրջակ       | - | 2հատ  |
| 7. Բասկետբոլի ցանց              | - | 4հատ  |
| 8. Բասկետբոլի զամբյուղ          | - | 2հատ  |
| 9. Բասկետբոլի գնդակ             | - | 3հատ  |
| 10.Ֆուտբոլի դարպաս              | - | 2հատ  |
| 11.Ֆուտբոլի գնդակ               | - | 6հատ  |
| 12.Վոլեյբոլի ցանց               | - | 2հատ  |
| 13.Վոլեյբոլի գնդակ              | - | 2հատ  |
| 14.Բասկետբոլի վահանակ           | - | 2հատ  |
| 15.Թենիսի սեղան փայտից          | - | 1հատ  |
| 16.Բարձրացատկի կանգնակ          | - | 2հատ  |
| 17.Բարձրացատկի ձող              | - | 2հատ  |
| 18.Նռնակ                        | - | 8հատ  |
| 19.Կողմնացույց                  | - | 2հատ  |
| 20.Վայրկյանաչափ                 | - | 2հատ  |
| 21.Ուժաչափ                      | - | 1հատ  |
| 22.Շախմատ                       | - | 5հատ  |
| 23.Գիր                          | - | 2հատ  |
| 24.Գանտել                       | - | 2հատ  |
| 25.Մանկական սպորտային ժիլետ     | - | 10հատ |
| 26.Մարմնամարզական օղակ          | - | 18հատ |
| 27.Մարմնամարզական կոն           | - | 12հատ |
| 28.Կախովի սպորտային գործիք      | - | 1հատ  |
| 29. Նվագարկիչ                   | - | 1հատ  |
| 30. Ձգելու պարան                | - | 1հատ  |



Աղավնաձորի միջնակարգ դպրոցի մետաղամշակման և փայտամշակման ուսումնական գույքի ցանկ

- |                        |         |
|------------------------|---------|
| 1. Հաստոց ֆուգան       | -1 հատ  |
| 2. Հաստոց խառատային    | - 3 հատ |
| 3. Հաստոց ֆրեզերային   | -1 հատ  |
| 4. Հաստոց շաղափիչ      | -1 հատ  |
| 5. Տակդիր ֆուգանող     | -2 հատ  |
| 6. Փայտամշակման հաստոց | -1 հատ  |

Գրադարան

**Գեղարվեստական գրքեր` 2586 կտոր,**

Բառարաններ, Հանրագիտարան, ատլասներ` 39 կտոր

Ուսումնամեթոդական գրքեր` 35 կտոր

**Զենքի պահեստ** -1/ 7,5ք.մ. ,

ուսումնական ավտոմատ ԱԿ-74-1,

օդամղիչ հրացան-1 հատ,

ուսումնական նոնակ Ֆ-1-4 հատ,

ուսումնական նոնակ ՌԳԴ-5-1 հատ,

ԶԲՀՍ-1 հատ, ճառագայթման հետախուզության սարք-1 հատ,

քիմիական զենքերի նյութերի նմուշօրինակ-1 կոմպլեկտ

#### ***4. Մահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն ու միջոցառումները:***

Մշակվել են ոլորտների նկարագրությունից բխող նպատակներ, նպատակներին համապատասխան` խնդիրներ, խնդիրների իրականացումը ապահովող գործողություններ և միջոցառումներ

| N |        | Գործողություններ ու միջոցառումներ                        |
|---|--------|----------------------------------------------------------|
| 1 | Ո.1Ն.1 | 1.1.1 Դպրոցի բյուջեի և խնայողությունների վերլուծություն  |
| 2 |        | 1.1.2 Լիազոր կազմակերպության հետ գնումների համաձայնեցում |

|    |         |                                                                                                     |
|----|---------|-----------------------------------------------------------------------------------------------------|
| 3  |         | 1.1.3Գնահատման հանձնաժողովի ստեղծում                                                                |
| 4  |         | 1.1.4Վերանորոգման աշխատանքների իրականացում աստիճանաբար, յուրաքանչյուր տարի 2 դասարան                |
| 5  | Ն.2     | 2.1.1Կարիքի գնահատում և գնումների իրականացում                                                       |
| 6  |         | 2.2.1Սպորտ հրապարակի մաքրում և կահավորում                                                           |
| 7  |         | 2.2.2 Արհեստական խոտածածքով ֆուտբոլի դաշտի կահավորում                                               |
| 8  | Ն.3     | 3.1.1Հանձնարարել տեխնոլոգիայի ուսուցչին և պահակին ունեցած միջոցների հաշվին կազմակերպել աշխատանքները |
| 9  |         | 3.2.1Դիտարկել տաղավարներ կառուցելու տարբեր հետաքրքիր առաջարկներ                                     |
| 10 |         | 3.2.2Ներգրավել աշխատանքներին աշակերտներին և ծնողներին                                               |
| 11 | Ն.4     | 4.1.1Խնդրագրով դիմել խոշորացված համայնքի ղեկավարությանը                                             |
| 12 |         | 4.2.1Գնումների կազմակերպում                                                                         |
| 13 |         | 4.3.1Գնել համապատասխան ներկեր և ձևավորել դահլիճը                                                    |
| 14 | Ն.5     | 5.1.1Ազատվել հնացած,չօգտագործվող գրքերից                                                            |
| 15 |         | 5.2.1 Ձեռք բերել արդիական, ուսումնական գործընթացին համահունչ գրքեր,դիմել ծնողխորհրդին և համայքին    |
| 16 |         | 5.3.1Ստեղծել առկա գրքերի էլեկտրոնային փաթեթ                                                         |
| 17 | Ն.6     | 6.1.1Մաքրել արհեստանոցը տարաբնույթ աղբից,պահել միայն անհրաժեշտ իրերը                                |
| 18 |         | 6.1.2Կատարել համապատասխան չափումներ և գնահատել աշխատանքների արժեքը                                  |
| 19 |         | 6.1.3 Համապատասխան ֆինանսական աղբյուրների հստակեցում և աշխատանքների կազմակերպում                    |
| 20 | Ո.2.Ն.1 | 1.1.1Մշտական խնամք և մաքրության պահպանում, հողագործական աշխատանքների                                |
| 21 |         | 1.2.1Տնկիների ձեռք բերում                                                                           |
| 22 |         | 1.2.2Ծառատունկի կազմակերպում                                                                        |
| 23 |         | 1.2.3Մշտական խնամք,ջրում                                                                            |
| 24 | Ն.2     | 1.1.1Գործին ներգրավել կենսաբանության ուսուցչին:Դիտարկել հնարավորությունները                         |
| 25 |         | 1.2.1Ձեռք բերել համապատասխան սերմեր կամ մշակաբույսեր                                                |
| 26 |         | 1.2.2 Աշխատանքներն իրականացնել տեխնիկական անձնակազմի և աշակերտների միջոցով                          |
| 27 | Ն.3     | 3.1.1Հարցը դնել կառավարման խորհրդում, քննարկել հնարավոր տարբերակներ                                 |
| 28 |         | 3.1.2 Հայտարարություն տալ համապատասխան հարթակներում                                                 |
| 29 |         | 3.1.3 Հավակնորդներից մեկի ընտրություն, պայմանագրի կապում                                            |

|    |         |                                                                                                                           |
|----|---------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 30 | Ն.4     | 4.1.1 Ուսումնասիրել անհրաժեշտ մարզագույքի տեսակները և քանակը                                                              |
| 31 |         | 4.1.2 Գնահատել կարիքը և ներկայացնել լիազոր մարմնին                                                                        |
| 32 |         | 4.1.3 Կատարել գնումը/կամ պատվիրակել/                                                                                      |
| 33 | Ն.5     | 5.1.1 Որոշել որքան դյուրակիր համակարգիչ է պետք արդյունավետ դասապրոցես ունենալու նպատակով                                  |
| 34 |         | 5.1.2 Կարիքը ներկայացնել լիազոր մարմնին                                                                                   |
| 35 |         | 5.1.3 Կազմակերպել գնման գործընթացը                                                                                        |
| 36 |         | 5.1.4 Կահավորել առանձին դասասենյակ ,դարձնել համակարգչային կաբինետ                                                         |
| 37 | Ո.3,Ն.1 | 1.1.1 Մշակել և ընդունել տնօրենների հաշվետվության ավելի ռացիոնալ ձևեր,գնահատման ռուբրիկների ստեղծում                       |
|    |         | 1.2.1 Կառավարման խորհրդի նիստերից տարեկան առնվազն երկուսը հրավիրել Աղավնաձորի միջնակարգ դպրոցում                          |
| 38 | Ն.2     | 2.1.1 Կառավարման խորհրդի նիստերից առաջ խորհրդի անդամների տեղեկացնել առաջիկա օրակարգում քննարկվելիք հարցերիսին             |
| 39 |         | 2.2.1 Ապահովել առողջ քննարկումների մթնոլորտ,կարևորել յուրաքանչյուր տեսակետ                                                |
| 40 | Ն.3     | 3.1.1 Մեմինարի կամ կլոր սեղանի կազմակերպում երկու դպրոցների մանկավարժների համար                                           |
| 41 |         | 3.2.1 Մեթոդիավորումների դեկավարների հանդիպման կազմակերպում                                                                |
| 42 | Ո.4,Ն.1 | 1.1.1 ՏԻ մարմիններին հաճախակի դպրոց հրավիրել                                                                              |
| 43 |         | 1.1.2 Կարիքի ներկայացում և հիմնավորում                                                                                    |
| 44 |         | 1.1.3 Նախնական սպասվելիք աշխատանքների կամ ծախսերի ներկայացում                                                             |
| 45 | Ն.2     | 2.1.1 Համընդհանուր ծնողական ժողովները հրավիրել 3-ամիսը մեկ անգամ                                                          |
| 46 |         | 2.1.2 Կազմակերպել <<Գրագետ ծնողավարություն>> խորագրով հանդիպումներ: Յուցադրել տեսաֆիլմներ,իրականացնել հոգեբանական թեստեր: |
| 47 |         | 2.2.1 Տարվա ընթացքում 4 անգամ հայտարարել Բաց դռների օր:                                                                   |
| 48 |         | 2.3.1 Տարին 1- 2 անգամ հայտարարել հայրիկների ծնողական ժողով                                                               |
| 49 |         | 2.3.2 Տղամարդ ծնողներին ներգրավել Զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքներին                                              |
| 50 | Ն.3     | 3.1.1 Մեծացնել ուսուցիչների և աշակերտների հետաքրքրությունը տարբեր մրցույթների և վերապատրաստումների նկատմամբ               |
| 51 |         | 3.1.2 Մշակել շահագրգռման տարբեր մեխանիզմներ,ինչպես նաև ֆինանսական կամ նյութական                                           |
| 52 |         | 3.1.3 Բարեվարքության կանոնում կատարել համապատասխան փոփոխություններ և ներկայացնել Կառավարման խորհրդի քննարկմանը            |

|    |         |                                                                                                                       |
|----|---------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 53 | Ն.4     | 4.1.1Տարին մեկ անգամ հրավիրել հանդիպում համայնքի անդամների հետ                                                        |
| 54 |         | 4.1.2Անց կացնել անանուն հարցումներ մատուցվող կրթության մակարդակի և որակի վերաբերյալ                                   |
| 55 |         | 4.1.3Կազմա-կերպել այցելություններ զոհված հերոսների և զառամյալ ծերերի տներ,կազմակերպել օգնություն ըստ անհրա-ժեշտության |
| 56 | Ն.5     | 5.1.1Հանձնարարել դասդեկներին հավաքել տեղեկություններ աշակերտների կյանքի,սոցիալական վիճակի մասին                       |
| 57 |         | 5.1.2Կազմել այցելությունների գրաֆիկ                                                                                   |
| 58 |         | 5.1.3 Ըստ անհրաժեշտության միջամտել երեխաների իրավունքների պաշտպանությանը կամ կազմակերպել օգնություն                   |
| 59 | Ն.6     | 6.1.1Ուսումնասիրել մշակույթի կենտրոնի գործունեությունը, գրաֆիկը, խմբակները                                            |
| 60 |         | 6.1.2 Ուղորդել աշակերտներին մասնակցել տարբեր խմբակների և միջոցառումների                                               |
| 61 |         | 6.1.3 Դպրոցի տարածքում գովազդել և ցուցադրել նրանց հաջողությունները                                                    |
| 62 |         | 6.1.4 Հաջողությունների հասած աշակերտներին պարգևատրել, մեծարել,դրա-մական կամ նյութական պարգևներ տալ                    |
| 63 | Ո.5,Ն.1 | 1.1.1 Կազմել դասալսումների ժամանակացույց                                                                              |
| 64 |         | 1.1.2 Կատարել փոխադարձ դասալսումներ փորձառու ուսուցիչների մոտ                                                         |
| 65 |         | 1.1.3 Ներկայացնել դասալսումների վերլուծությունը                                                                       |
| 66 |         | 1.1.4 Ըստ կարիքների կազմակերպել վերապատրաս-տումներ:Ծանոթացնել ժամա-նակի տնօրինման հմտություն-ներին                    |
| 67 |         | 1.2.1 Դասա-լսումների կազմակերպում սկսնակ ուսուցիչների մոտ                                                             |
|    |         | 1.1.2 Կատարել փոխադարձ դասալսումներ փորձառու ուսուցիչների մոտ                                                         |
| 68 | Ն.2     | 2.1.1 Առարկայական շաբաթների հայտարարում                                                                               |
| 69 |         | 2.1.2 Նույն ուսուցչի մոտ 3-5 դասալսման իրականացում, վերլուծություն                                                    |
| 70 |         | 2.1.3 Տնօրինության կողմից մի քանի առարկաներից գրավոր աշխատանքների անցկացում                                           |
| 71 |         | 2.2.1 Դասալսումներ,գրավոր աշխատանքներ,վերլուծություն                                                                  |
| 72 | Ն.3     | 3.1.1 Դասի պլանավորման սեմինարների կազմակերպում                                                                       |
| 73 |         | 3.1.2Հասնել վերջնարդյունքների ճիշտ ձևակերպմանը                                                                        |

|    |     |                                                                                                                                     |
|----|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 74 |     | 3.1.3Ստեղծել դասի պլանավորման գնահատման ռուբրիկներ                                                                                  |
| 75 | Ն.4 | 4.1.1 Պաբերաբար ստուգել թեմատիկ,օրվա պլանները, դրանց կազմման ձևերը:                                                                 |
| 76 |     | 4.1.2Շահագրգռել նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառելը                                                                             |
| 77 |     | 4.2.1 Մշակել շահագրգռման մեխանիզմներ, ներմուծել <<Նորարար ուսուցիչ>>,<<Վաստակավոր ուսուցիչ>>,<<Օլիմպիական ուսուցիչ>> այլ մրցանակներ |
| 78 |     | 4.2.2 Դպրոցի կառավարման խորհրդին ներկայացնել փոփոխված բարեվարքության կանոնների սխեմա-առաջարկ                                        |
| 79 |     | 4.2.3 Ստեղծել անհրաժեշտ և նպաստավոր պայմաններ տարակարգի և կամավոր ատեստավորման դիմող ուսուցիչների համար                             |
| 80 |     | 4.3.1Ընթացակարգի համաձայն ապահովել ուսուցիչների հերթական պարտադիր ատեստավորման համար պայմաններ                                      |
| 81 |     | 4.3.2Վեր հանել ուսուցիչների անհատական կարիքները և ապահովել անհրաժեշտ վերապատրաստումների մասնակցելը                                  |
| 82 |     | 4.4.1 Թույլ տալ և նպաստել տաղանդավոր, ստեղծագործող ուսուցիչներին բացել համապատասխան խմբակներ, կազմակերպել միջոցառումներ             |
| 83 |     | 4.4.2Լուսաբանել և խրախուսել ստեղծագործ ուսուցիչների աշխատանքները պատվոգրերով և դրամական կամ նյութական պարգևներով                    |
| 84 |     | 4.5.1Խախուսել ուսուցչի որակական աճի հետ կապված ցանկացած նախաձեռնություն                                                             |
| 85 |     | 4.5.2Օրինակելի կանոնադրության բարեվարքության կանոններ բաժնում կատարել փոփոխություններ,առաջարկները ներկայացնել խորհրդի քննարկմանը    |
| 86 | Ն.5 | 5.1.1 Ստեղծել պայմաններ ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացման համար                                                            |
| 87 |     | 5.1.2 Ուսումնասիրել օտար լեզուների միջին գնահատականները,տալ                                                                         |

|     |          |                                                                                                               |
|-----|----------|---------------------------------------------------------------------------------------------------------------|
|     |          | գրավոր աշխատանքներ                                                                                            |
| 88  |          | 5.1.3 Յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ հայտարարել օտար լեզվի օր                                              |
| 89  | Ն.6      | 6.1.1 Գրանցվել և անդամակցել <<Արհեստական բանականություն>> կրթական ծրագրին                                     |
| 90  |          | 6.1.2 Ապահովել ծրագրի հետ կապի շարունակականությունը                                                           |
| 91  |          | 6.2.1 Մշտապես թարմացնել տարբեր խմբակների մասին ինֆորմացիան և ցուցադրել տեսանելի վայրերում                     |
| 92  |          | 6.2.2 Տաղանդավոր երեխաների աշխատանքները, հմտությունները լուսաբանել և արժանացնել պարգևների                     |
| 93  |          | 6.3.1 Հատուկ ուշադրություն դարձնել, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ պարապել օժտված երեխաների հետ            |
| 94  | Ո.6, Ն.1 | 1.1.1 Ֆինանսական վիճակի և խնայողությունների ուսումնասիրում                                                    |
|     |          | 1.1.2 Կարիքը և հնարավորությունները գնահատել և ներկայացնել լիազոր մարմնին                                      |
| 95  |          | 1.1.3 յուրաքանչյուր տարի ձեռք բերել առնվազն մեկ համակարգիչ                                                    |
| 96  | Ն.2      | 2.1.1 Հավաքել ինֆորմացիա Հայաստանում գործող տեղեկատվական ծանցերի վերաբերյալ                                   |
| 97  |          | 2.1.2 Ընտրել օպտիմալ տարբերակ                                                                                 |
